

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի

թիվ 11/9

քաղ. երեւան

**Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական
ապրանքային անվանացանկին համապատասխան՝ ապրանքների առանձին
տեսակների դասակարգման մասին**

Ապրանքների միասնական դասակարգման եւ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթների իրականացման նպատակներով՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի, Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից հետեւյալ որոշումների կամ պարզաբանումների ընդունումը համաձայնեցնել՝

1.1. Սեւ մետաղներից փայտամածված անկեր, որն իրենից ներկայացնում է պտուտակավոր արմատուրային գլանվածք, որի կողերն անցնում են պտուտակավոր գծով եւ ծառայում են ոչ միայն բետոնի հետ կցորդման, այլեւ առանցքները միմյանց եւ այլ դետալների հետ միացման համար՝ հատուկ ներքին պարույրով պտուտակամերների եւ կցորդիչների օգտագործմամբ, դասակարգվում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 7318 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ-ի 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.2. Դեկորատիվ մասին ամրացված՝ մշտական մագնիս հանդիսացող ներկառուցված մագնիսով հուշանվերային արտադրանքը դասակարգվում է դեկորատիվ բաղադրիչի պատրաստման նյութի համաձայն՝ ԱՏԳ ԱԱ-ի 3 (բ) մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.3. Թղթային թերթի, պաստառի տեսքով վերարտադրանկարը, որի վրա տպագիր եղանակով պատկերված են պատկերներ՝ առանց բացատրական տեքստի, ներկայացված փայտե շրջանակի հետ, որի արժեքը եւ բնույթը համապատասխանում են վերարտադրանկարի արժեքին եւ բնույթին, դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4911 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ 3 (բ) մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան, քանի որ նշված ապրանքի հիմնական հատկանիշները պայմանավորված են անմիջապես վերարտադրանկարով:

Թղթային թերթի, պաստառի տեսքով վերարտադրանկարը, որի վրա տպագիր եղանակով պատկերված են պատկերներ՝ առանց բացատրական տեքստի, ներկայացված փայտե շրջանակի հետ, որի արժեքը եւ բնույթը զգալիորեն գերազանցում է վերարտադրանկարի արժեքը, դասակարգվում է առանձին՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4911 ապրանքային դիրքում, իսկ վերարտադրանկարի հետ առաքվող շրջանակը դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 4414 ապրանքային դիրքում՝ ԱՏԳ ԱԱ-ի 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

1.4. Չլեգիրացված պողպատից տարողություն՝ մետաղական բալոն, ներկված կարմիր գույնով, վերին հատվածում պարուրակ ունեցող տեխնոլոգիական անցքերով, 2,3 լիտր տարողությամբ, 1 մմ պատի հաստությամբ, նախատեսված կրակմարիչ նյութով լցվելու համար, դասակարգվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի 7310 ապրանքային դիրքում՝ ՄՄ ԱՏԳ 1-ին մեկնաբանության հիմնական կանոնին համապատասխան:

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ մինչև 2014 թվականի օգոստոսի 10-ը պատրաստել 1.1 - 1.4 կետերում նշված ապրանքների դասակարգման մասին որոշման նախագծեր կամ պարզաբանումներ:

Նախագահի տեղակալ՝

Ա.Ֆ. Շախլեևսկի

Նախագահի տեղակալ՝

Գ.Կ.Ամրին

Ռուսաստանի ԴՄԾ-ի ղեկավարի
առաջին տեղակալ, Միավորված
կոլեգիայի անդամ՝

Վ.Մ. Մալինին